



Քույր Չերիլ Ս. Լանթ

Վերջերս կոչումից ազատված Երեխաների Միության Գերագույն Նախագահ

Որ մեր երեխաները կարողանան տեսնել Փրկչի երեսը

Որպես ծնողներ և ղեկավարներ այս աճող սերնդի առաջ մեր սուրբ պատասխանատվությունն է՝ բերել նրանց ղեկի Փրկչիչը:

Սի քանի տարի առաջ ես ուսուցանում էի մանկական խմբի ղեկավարներին ինչպես ավետարանի կարճ դաս մատուցել շատ փոքր երեխաներին: Ղեկավարներից մեկի ծնկներին էր նստած նրա փոքրիկ տղան: Ես ձեռքս վերցրեցի Փրկչի նկարը և, ցույց տալով, թե ինչպես է պետք խոսել երեխաների հետ, սկսեցի պատմել Հիսուսի մասին: Փոքրիկ տղան սահեց մոր ծնկներից, չքքեց մոտեցավ ինձ, ուշադիր նայեց նկարին և դիպեց նրեսին: Երկխոսության այդ պահին ես հարց տվեցի. «Ո՞վ է սա»: Ժպիտը երեսին երեխան պատասխանեց. «Հիսուս»:

Այդ երեխան այնքան փոքր էր, որ դժվար թե կարողանար արտասանել իր անունը, բայց նա ճանաչեց նկարը և գիտեր Փրկչի անունը: Տեսնելով նրա քաղցր պատասխանը, ես մտածեցի Փրկչի խոսքերի մասին. «Միշտ փնտրեք Տիրոջ երեսը, որ կարողանաք համբերությամբ տիրել ձեր հոգիներին, և դուք կունենաք հավերժական կյանք» (ՎեՈւ101. 38):

Ի՞նչ է նշանակում տեսնել Փրկչի երեսը: Անշուշտ դա նշանակում է ոչ թե պարզապես ճանաչել Նրա նկարը: Իրեն փնտրելու Քրիստոսի հրավերը հրավեր է ճանաչել Իրեն, իմանալ այն, ինչ Նա արել է մեզ համար և ինչ նա խնդրել է մեզ անել: Գալ ղեկի Քրիստոսը և ի վերջո տեսնել Նրա երեսը կարելի է միայն, եթե մենք մոտենանք Նրան մեր հավատքի և մեր գործերի միջոցով: Դա կյանքի տևողություն ունեցող



գործընթաց է: Այսպիսով, ինչպե՞ս մենք փնտրենք Նրան այս կյանքում, որպեսզի կարողանանք տեսնել Նրա երեսը հաջորդ կյանքում:

ՅՆեփիում մենք մի պատմություն ունենք մարդկանց մասին, ովքեր իրականում տեսնել են Փրկչին այս կյանքում: Եվ թեև մենք չենք կարող տեսնել նրան այժմ, մենք կարող ենք սովորել նրանց փորձից: Մահից հետո Փրկիչը հայտնվեց այդ մարդկանց, ուսուցանեց նրանց և օրհնեց նրանց: Այնուհետև «Եվ նղավ այնպես, որ նա պատվիրեց, որ իրենց փոքր երեխաներին բերեն» (3 Նեփի 17.11):

Որպես ծնողներ և ղեկավարներ այս աճող սերնդի առաջ մեր սուրբ պատասխանատվությունն է՝ բերել նրանց ղեկի Փրկչիչը, որպեսզի նրանք կարողանան տեսնել Նրա երեսը և մեր Երկնային Հոր երեսը: Այդպես, մենք մեզ նույնպես բերում ենք ղեկի Նա:

Կրկին, հարցն այն է, թե ինչպես մենք անենք դա, հատկապես մի աշխարհում, որը լի է շեղող հանգամանքներով: 3-րդ Նեփի-ում ծնողները սիրում էին Տիրոջը: Նրանք հավատացյալներ էին: Նրանք հավատում էին Հիսուսի հրաշքներին: Նրանք սիրում էին իրենց երեխաներին: Նրանք հավաքեցին նրանց լսելու Տիրոջ խոսքերը և հնազանդվելու՝ երեխաներին Իր մոտ բերելու Նրա պատվիրանին:

Նրանից հետո, երբ երեխաները բերվեցին Իր մոտ, Քրիստոսը ծնողներին խնդրեց ծնկի գալ: Ապա Նա նրանց համար արեց այն, ինչ արել է մեր բոլորի համար: Նա աղոթեց նրանց համար Հորը և դա այնքան «հիանալի և հրաշալի էր, որ խոսքերը չէին կարող նկարագրել» (3 Նեփի 17.16): Գալով Փրկչի մոտ և ընդունելով Նրա Քավությունը, այդ ծնողները ամրացան, որպեսզի անեին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր իրենց երեխաներին «բերելու» համար:

Մեկ այլ բան, որ Քրիստոսը խնդրեց այդ ծնողներին անել, գտնում ենք 3 Նեփի 22.13-ում. «Բոլոր քո զավակները պետք է ուսուցանվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը»:

Եվ այսպես, հետևելով Փրկչի հետ ունեցած իրենց սեփական



փորձառությանը, այդ Նեփիացի ծնողները ուսուցանեցին իրենց երեխաներին Նրա մասին: Նրանք նրանց սովորեցրեցին սիրել Տիրոջը: Նրանք սովորեցրեցին նրանց Նրա ավետարանը: Նրանք սովորեցրեցին նրանց, թե ինչպես ապրել ըստ դրա: Նրանք այնքան լավ ուսուցանեցին նրանց, որ 200 տարի շարունակ արդարություն և խաղաղություն էր տիրում երկրում (տես 4 Նեփի 1.1–22):

Այժմ, ես կլնդդեմ ձեզ նայել ձեր շուրջը՝ նրանց, ում սիրում եք: Դա է ամենակարևորը՝ մեր ընտանիքները: Ես վստահ եմ, որ ամենից շատ դուք ցանկանում եք, որ այս ընտանիքը ձերը լինի հավերժ: 3-րդ Նեփիի պատմությունը կարող է մեզ օգնել մեր երեխաներին բերել Նրա մոտ, որովհետև այն տալիս է հետևելու ուղի: Նախ մենք պետք է սիրենք Տիրոջը մեր ողջ սրտով և պետք է սիրենք մեր երեխաներին: Երկրորդ, մենք պետք է դառնանք արժանի օրինակներ նրանց համար, շարունակ փնտրելով Տիրոջը և աշխատելով ապրել ավետարանով: Երրորդ, մենք պետք է ուսուցանենք մեր երեխաներին ավետարանը և ինչպես ապրել դրա ուսմունքներով:

Պեպի Փրկիչը մեր երեխաներին բերելու այս ուղուն հետևելը գործընթաց է: Եկեք կրկին դիտարկենք ուղին: Նախ մենք պետք է սովորենք սիրել Տիրոջը և մեր ընտանիքներին: Սա պահանջում է ժամանակ, փորձ, հավատք և անձնվեր ծառայություն: Ապա, լցվելով Տիրոջ սիրով, մենք կարող ենք սիրել: Նա կարող է

լաց լինել մեր արածի համար, բայց Նա սիրում է մեզ և միշտ պատրաստ է օգնել մեզ: Ահա ինչպես մենք պետք է սովորենք սիրել մեր երեխաներին:

Երկրորդ, մենք պետք է դառնանք արժանի օրինակներ: Սա նույնպես գործընթաց է: Եթե մենք ուզում ենք, որ մեր երեխաները զան ղեպի Քրիստոսը և տեսնեն Նրա երեսը, կարևոր է, որ մենք նույնպես ցանկանանք տեսնել նրան: Մենք պետք է իմանանք ճանապարհը, որպեսզի ցույց տանք նրանց: Մենք պետք է կարգուկանոնի մեջ պահենք մեր կյանքը, որպեսզի երեխաները նայեն և հետևեն մեզ: Մենք կարող ենք հարցնել. «Բ՞նչ եմ տեսնում իմ երեխաները, երբ նայում եմ իմ երեսին»: «Տեսնո՞ւմ եմ նրանք Փրկչի պատկերը իմ երեսին իմ ապրած կյանքի հետևանքով»:

Այժմ հիշեք, մեզանից ոչ մեկը չի լինի կատարյալ օրինակ մեր երեխաների համար, բայց մենք բոլորս կարող ենք դառնալ արժանի ծնողներ և ղեկավարներ: Արժանի լինելու մեր ձգտումը ինքնին օրինակ է ծառայում: Երբեմն մեզ կթվա, թե չենք կարողանում, բայց մենք կարող ենք շարունակել փորձել: Տիրոջ հետ և Նրա միջոցով մենք կարող ենք ամրանալ, դառնալով այն, ինչ պետք է դառնանք: Մենք կարող ենք անել այն, ինչ պետք է անենք:

Եվ երրորդ, մենք ունենք այն գործընթացը, որով կարող ենք բերել մեր երեխաներին ղեպի Փրկիչը, ուսուցանելով նրանց ավետարանի

ճշմարտությունները սուրբ գրություններից և մարգարեների խոսքերը, և օգնելով նրանց զգալ և ճանաչել չոգին: Անգամ ամենափոքր երեխաները կարող են հասկանալ և ընդունել հավերժական բնույթի բաները: Նրանք սիրում են սուրբ գրությունները և սիրում են մարգարեին: Նրանք բնագոյաբար ուզում են լինել լավ: Մենք կարող ենք օգնել նրանց պահել երկնքի հետ կապը բաց: Մենք կարող ենք պաշտպանել նրանց այն ազդեցություններից, որոնք հնազանդում են չոգուց: Մենք կարող ենք օգնություն և ուղղություն գտնել սուրբ գրություններում: Մենք նաև կարող ենք սովորեցնել մեր երեխաներին գտնել իրենց սեփական պատասխաններն այնտեղ: Մենք կարող ենք ուսուցանել մեր երեխաներին ճիշտ սկզբունքները և օգնել կիրառել դրանք իրենց կյանքում: Մենք կարող ենք ուղղորդել նրանց ղեպի չոգին, որպեսզի նրանք կարողանան ստանալ իրենց սեփական վկայությունը իրենց սովորած ճշմարտությունների մասին: Մենք կարող ենք օգնել նրանց ուրախություն գտնել ավետարանում: Սա կկառուցի հավատքի և հնազանդության հաստատուն հիմք իրենց կյանքում, ինչը կամրացնի նրանց:

Այս ամենը հեշտ չէ: Նեփիացիների մասին պատմությունն ասում է, որ այդ ընտանիքները 200 տարի խաղաղության մեջ ապրեցին: Բայց չի ասում, որ այդ 200 տարիները անցան առանց ջանքերի, մեծ ջանքերի: Բայց անշուշտ դա պահանջել է մեծ ջանքեր: Դա պահանջում է ծանր աշխատանք և հավատք, ոչինչ ավելի կարևոր կամ հատուցող չի: Եվ Տերը կօգնի մեզ, քանզի Նա սիրում է այս երեխաներին ավելի, քան մենք: Նա սիրում է նրանց, և Նա կօրհնի նրանց:

Դուք կհիշեք, որ Նա օրհնեց Նեփիացի երեխաներին, անհատապես, և աղոթեց նրանց համար (տես 3 Նեփի 17.14–17, 21): Այնուհետև. «Ուրախությամբ բազմության հետ, և ասաց նրանց. Նայե՛ք ձեր փոքրիկներին»:

Եվ երբ նրանց նայեցին՝ տեսնելու համար, նրանք զգեցին իրենց աչքերը ղեպի երկինք, և նրանք տեսան երկինքները բաց, և նրանք

տնասան հրեշտակները՝ իջնելիս երկնքից, կարծես թե կրակի մեջ էին, և նրանք իջան վար և օղակեցին այն փոքրիկների շուրջը, և նրանք շուրջանակի, օղակված էին կրակով, և հրեշտակները սպասավորում էին նրանց» (3 Նեփի 17.23-24):

Կարո՞ղ են մեր երեխաները նման օրհնություններ զգալ այսօր: Երեց Մ. Ռասել Բալլարդն ասել է. «Անշուշտ, նրանց, ում վստահվել են այս թանկարժեք երեխաները, տրվել է սուրբ և ազնվագույն հանձնարարություն, քանզի մենք ենք այն մարդիկ, ում Աստված նշանակել է այսօր, որ շրջապատեն երեխաներին սիրով և հավատքի կրակով և հասկացողությամբ, թե ով ենք մենք» (“Behold Your Little Ones,”

Tambuli, Oct. 1994, 40):

Եղբայրներ և քույրեր, մենք հրեշտակներ ենք, որոնց Երկնային Հայրը ուղարկել է այսօր օրհնելու համար երեխաներին, և մենք կարող ենք օգնել նրանց մի օր տնանել Փրկչի երեսը, եթե ուսուցանենք ավետարանի սկզբունքները և լցնենք մեր տները դրանցով ապրելու ուրախությամբ: Միասին մենք կարող ենք ճանաչել Նրան: Մենք կարող ենք զգալ Նրա սերը և Նրա օրհնությունները: Եվ Նրա միջոցով մենք կարող ենք վերադառնալ Հոր ներկայություն: Մենք անում ենք սա, որովհետև ուզում ենք լինել հնազանդ, հավատարիմ և պարտաճանաչ Նրա ուսմունքներին հետևելիս:

«Ճշմարիտ, այսպես է ասում Տեբրը. Կլինի այնպես, որ ամեն հոգի, որ թողնում է իր մեղքերը և գալիս է ինձ մոտ, և կանչում է իմ անունը, և հնազանդվում է իմ ձայնին, և պահում է իմ պատվիրանները, պիտի տնանի իմ երեսը և իմանա, որ ես եմ» (ՎեՆ 93.1):

Եղբայրներ և քույրեր, ես գիտեմ, որ Աստված ապրում է, Հիսուս Քրիստոսը Նրա Որդին է, մեր Փրկիչը և Քավիչը: Նա մեզ հրավիրել է գալ դեպի Նա և պատվիրել է բերել մեր երեխաներին, որպեսզի մենք միասին կարողանանք տնանել Նրա երեսը և հավերժ ապրել Նրա հետ և մեր Հոր հետ երկնքում: Իմ աղոթքն է, որ մենք բոլորս կարողանանք աշխատել և ստանալ այս մեծ օրհնությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց ԲՎԵՆՅՈՒՆ ԲՈՒՔ

Տասներկու Առաքյալների Բվորումից

Մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին

Մենք ուրախանում ենք այն բոլոր բաներով, ինչ Փրկիչն արել է մեզ համար: Նա յուրաքանչյուրիս համար հասանելի է դարձրել փրկությունը և վեհացունը:

Մենք պատասխանատվություն է Չատիկի կիրակի խոսել աշխարհով սիթված Վերջին Օրերի Սրբերի հետ, որոնք սիրում են մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Այսօր մենք տոնում ենք մահվան հանդեպ Նրա հաղթանակը: Մենք փայփայում ենք մեր իմացությունը և սրտանց երախտագիտություն ենք զգում մեր օգտին կատարած Փրկչի պատրաստակամ քավիչ գոհաբերության համար: Իր Հոր կամքին Նրա լուռ համաձայնությունը գերազույց հաղթանակ բերեց մահվան հանդեպ և ամենազերազանց իրադարձությունը դարձավ մարդկության պատմության մեջ: Ես երախտապարտ եմ, որ հնարավորություն ունեմ խոսելու

Փրկչին հետևելու մասին: Փրկչի մահկանացու ծառայության վերջին երկու օրերը, Խաչելությանից առաջ, խորապես կարևոր և ինչ-որ առումով հասկացողությունից վեր էին: Մեր հավերժական ճակատագրին վերաբերող չափազանց շատ բաներ տեղի ունեցան հինգաբային և ապա ուրբաթ՝ Քրիստոսի խաչելության օրը: Հինգաբային երկույան եղավ Վերջին ընթրիքը՝ Փեսալի ընթրիքը, «որը գերությունից ազատվելու Իսրայելի հիշատակն էր...»¹: Մեծ կարևորության արարողություններ հաստատվեցին և վարդապետություններ ուսուցանվեցին Վերջին ընթրիքի ժամանակ: Ես կնշեմ միայն երեքը: Նախ՝ Փրկիչը ներկայացրեց հաղորդության արարողությունը: Նա վերցրեց հացը, կտրեց այն, օրհնեց այն և փոխանցեց Իր աշակերտներին՝ ասելով. «Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրուած. այս արե՛ք իմ յիշատակի համար»²: Այս ձևով նա հաստատեց հաղորդությունը: Երկրորդ՝ Նա չափազանց շատ շնչեց սեր ուսուցանող վարդապետությունը՝ որպես վեհացմանը նախորդող սկզբունք: Նա ուսուցանեց. «Մրանով բոլորը կիմանան, որ դուք իմ աշակերտներն եք, եթե դուք միմեանց

